№ 224 ԿԻՐԱԿԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1915
ԳԱՌԱՍՈՒՆՉՈՐԴՈՒ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 224

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի։
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Հայոց Դրամատիկ Ընկերութիւն

Երկուշաբթի, հոկտեմբերի 12-ին, 1915 թ.

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կը ներկայացնէ

ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Դրամա 12 պատկերով, ՇԱՆԹԻ։

Մասնակցում են.—տ. տ. Աշխէն, Զաբէլ, Ժասմէն, Մանուշարեան, Սիրանոյշ, Սեսիլեան. պ. պ. Աբէլեան, Սղեան, Ալիխանեան, Աւետեան, Գրիգ, Խուդանեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մելքոնեան, Սուրբեան, Սեսիլեան և ուրիշներ։

Սկիզբը երեկ. հիշդ ժամը 8-ին։ ✦✦ Տեղերի գները սովորական են։

Կասսան բաց է ամենայն օր առաւ. ժամը 10—2-ը և երեկ. ժամը 6—8-ը։

Տոմսակները ծախվում են միմիայն թատրոնի կասսայում։

Պատրաստվում է ներկայացման համար ՄԵԾ ՑԱՆՑԱՒՈՐԸ Սօքոլչիկով-Սամարինի։

Բեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

Վաճառութեան հերթապահ անդամներ՝ Ա. ԵՂԵԿԵԱՆ, Ա. ՆԱՀԱՐԷԹԵԱՆ

առ. 723. 2—2

ՅԱՃԿԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է հայ հասարակութեան, որ Կրճանիսում, Մերանաւոր վանքի մուտքում ապաստանած 150—170 որբերի խնամակալութիւնը սկսած. 15-ից վերցրել է իր վրա՝ հոգալով նոցա առօրեայ ծախքերն և մտածում է նրանց դաստիարակութեան մասին։

Միութիւնը յայտնելով այս մասին, կոչ է անում բոլոր նրանց, որոնց սրտին մօտ է աւերեալ հայրենիքից փախած դժբաղդ որբերի կենաքի գոյութեան ապահովութիւնը, թող բարեհաճեն իրանց լսման, ինչ չափով էլ լինի նա, նուիրաբերել այդ տարաբաղդ օրբերին մնացցանելու և ազգային ոգով դաստիարակելու համար։

Նուիրատուութիւններ թէ դրամով և թէ զանազան իրերով՝ խնդրվում է ուղղել հետեւեալ հասցէներին.

1) Միութեան նախագահ Արշակ Սաֆարեանին, Купеческій банкъ.
2) Միութեան անդամ-գանձապահ Յակոբ Տէր-Յարութիւնեանին, Кафе «Централь» (Эрив. площадь).
3) Մերանաւորի գաւթում կառավարչին։

(օ. մ.) առ. 658. 10—10 Հայրենակցական Միութիւն

Թիֆլիսի Հայ Եկ. Միաբան. եւ Հոգաբարձութիւնների Յանձնաժողովից

Ամսիս 21-ին, կառավարութեան թոյլատրութեամբ, յօգուտ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԾԽԱԿԱՆ ՀԵՄԱՁԵՌԻ ԱՌԱՋԻՆ ՈՐԲԱՆՈՑԻ,

որ բացվել է ներկայ տարվայ մայիսի 15-ին Մեծ-Ղարաքիլիսայում ու ներկայումս տեղափոխված է Թիֆլիս, Յանձնաժողովս կազմակերպում է

ՄԻՕՐԵԱՅ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հայերէն և ռուսերէն լեզուներով «ԼՈՒՄԱՅ» թերթի վաճառումով։

Առանձին կը յայտարարվի թաղամասերը կազմակերպողների անունները ու հասցէները։

առ. 728. 1—1

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿԱՆԱՆՑ ԲԱՐՁՐ ԿՈՒՐՍԵՐԻ

ՎԵՐԱՏԵՍՈՒՉԸ

այսուարարում է, որ պարապմունքները կուրսերում, որ գանվում է ներկայումս ՐՕՍՏՕՄԻՄ ԴՕՆԻ ՎՐԱ, ենթադրվում է սկսել ընթացիկ սեպտեմբերի վերջերին, սակայն այն պայմանով, որպէս զի ուսումնական տարին կորված չը համարվի։ Պարապմունքները երբ սկսվելու մասին կը յայտարարվի լրագիրներում։ Ընդունելութեան պայմաններն ըստ սահմանման ուղարկում է Կուրսերի Դիւանատունը՝ Ռոստովում Դ./Վ.։ Բժշկական ֆակուլտետ քանալու մասին կը լինի յատուկ յայտարարութիւն։

առ. (կ. ե. հ.) 729. 3—1

Հայկական Կենտրոնական Կոմիտէն եւ Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. Խորհուրդը

յանձն առնելով Թիֆլիսում և գաւառներում մեծ քանակով գեմք գաղթականների համար վերմակներ, դոշակներ և տաք շորեր պատրաստելը, սրանով հրաւիրում է կար անող կանանց դիմել Թիֆլիսում նոր բացված աշխատանոցը (Тановская ул. д. Манташева) կար ստանալու համար։

Իսկ գաւառներում առաջարկվում է Ընկերութեան ճիւղերին անյապաղ կազմակերպել կարի աշխատանոցներ և, դիմելով Ընկերութեան խորհրդին, ստանալ նիւթեր կամ դրամ տեղումը գնելու։

առ. 730. 5—1

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ռուսաց լեզուի մէջ վարժվելու և կատարելագործվելու համար։

Յատկապէս հայերի համար։

Առանձնապէս հրաւիրում ենք այն թիւրքահայ երիտասարդների ուշադրութիւնը, որոնք տեղս ազրելով զգում են պետական լեզուի անհրաժեշտութիւնը։

Գործնական և տեսական վարժութիւն։ ✦—✦ Ինքնուրոյն արագընթաց մեթոդով։

Ամսավճարը սկսած 3 բուբլուց։

Դիմել՝ Экзаршеская площадь, 4. Սեղրակ Թառայեանցին։

առ. (հ. ու. կ.) 714. 3—3

Թեղինի համապատասխանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ.Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Դէմքին հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկուհին նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈՒՆՆԵՐՈՎ, արհեստական ՀԵՎՄՕՏՕՐԱՑՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների ընդունելութիւնը և լուսանկարները լուսաւորված ՊՆԴԻՆԵՆՆ ԶԱՆԹԱՑԻՆ ՁԱՆԹԱՊԱՏԿԵՐՈՎ։ Ամեն օր.—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՔՄԻՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7-29.

առ. (ա. օ.) 504. 100—59

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

ԿԷՕՆՃԵԱՆ

ԱՍՊԻՍԻՆՆԵՐԻ

Պլասթր—սոկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Նատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ սոկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լիրմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։

(ա. օ.) առ. 515. 100—47

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

այսուարարում է, որ եղանակի վատութեան պատճառով *Որբանոցի պաշտօնական բացումը*

ՅԵՏԱՁԳՎՈՒՄ Է

առ. 726. 1—1 ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑՈՒՑ

(Զուբալովի անուան)

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Վաղը, երկուշաբթի, Հոկտեմբերի 12-ին

կը ներկայացնէ

ՕԹԷԼԼՕ

Տրագեդիա 5 գործ. Շէքսպիրի

Մասնակցում են.—տ. տ. Ազնիւ, Յամիկ, պ. պ. Ամօ-Խաչատրեան, Աղաբաբեան, Գասլատեան, Եանիկեան, Երամեան, Մարութեան, Միքայէլեան, Պետրոսեան, Օհանեան և ուր.։

Սկիզբն է երեկ. ժ. 8-ին։

Տեղերի գները 4—50 կոպէկ։

Բեժիսեօր՝ ԱՄՕ-ԽԱՉԱՏՐԵԱՆ

Վաճառութեան հերթապահ անդամներ՝ ԳԱՒՐՕՇ և Մ. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ

առ. 731. 1—1

ՆՈՐ ԴՊՐՈՑ

կարուձևի, շքեղ ձեռագործի և գորգագործութեան։

Հասցէն՝ Сурпъ-Карапетскій оврагъ № 8. Մ. ԴՈՒԼԵԱՆ

(ե.) առ. 724. 2—1

ԿՆԱՐՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բոտիշեվսկայա 13, տելեֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ մանրի, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն ստացիոնարն հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ե. Ե. Վեսելօ Լզերով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(չ.ու կ.) առ 970. 100—98

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նարարեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)

Վերադառնալով հանքային ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։

Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սօլօլակ, Բոտիշեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.

(ե.հ.կ.) առ. 634. 100—12

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ

Սակաւաթիւ օրինակներ հետեւեալ հրատարակութիւններից

1) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Գր. Արծրունու, . . . գ. 20 կ.
2) ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ, др. Гр. Арцруни, переводъ А. Аракелянца. . . . գ. 25 կ.
5) ВОСТОЧНЫЙ ВОПРОСЪ, др. Гр. Арцруни . . . գ. 05 կ.
6) ЭКОНОМИЧЕСКІЯ ПЕРСПЕКТИВЫ ВОСТОЧНОЙ АНАТОЛІИ, Ал. Калантаръ . . . գ. 25 կ.
7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, Գ. Տէր-Ռուբինեանի, . . . գ. 20 կ.
8) ՀԱՅԿ. ԽՆԴԻՐՆ ԵՒ Ա.ԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՀԱՅՈՑ, Ա.ռ. Սարգսեանի . . . գ. 2 ր. 50 կ.
9) ՀԱՅՔ Ի Կ. ՊՕԼԻՍ 20-Դ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ, Արծրունու, . գ. 25 կ.

Վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

(7) 0—5

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Վերջին օրերի քաղաքական խոշոր դէպքերը ստեղծեցին մի մռայլապատ քաղաքական հորիզոն։ Թանձր է և անթափանցելի այն մշուշը, որ պատել է այդ հորիզոնը։

Բոլգարիայի հանդէս գալը իբրև դաշնակից Թիւրքիայի և Գերմանիայի, Յունաստանի և Ռումինիայի անորոշ, երկդիմի վարմունքը, Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դելկասէի հրաժարականը—այս ամենը, պատահած՝ մի քանի օրերի ընթացքում, կարելի է ասել՝ կերպարանափոխեցին քաղաքական աշխարհի ամբողջ կացութիւնը։

Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, Իտալիան հարկադրված տեսան իրանց պատերազմ հրատարակել Բոլգարիայի դէմ, որի դաւաճանական վարմունքը ոչ միայն մեծ զայրոյթ առաջ բերեց այդ երկիրների մէջ, այլ և սարսափ մարդկանց մտածել, թէ արդեօք մարդկային պատմութեան մէջ գոյութիւն ունի երախտագիտութեան զգացումն թէ ոչ։ Այն Բոլգարիան, որ դարերով ճնշվում, հարստահարվում էր Թիւրքիայից, հեծեծում էր նրա անագորոյն լծի տակ, որի լաւագոյն զաւակներով—գեղեցիկ մանչերով և աղջիկներով—լցվում էին Թիւրքական հարէմները, որի եկեղեցիները, սրբութիւնները պղծվում էին Թիւրք բռնաբռնողների ձեռքով և որին ազատեց իր տարկութիւնից և անարգանքից իր դաւանակից մեծ երկիրը՝ Ռուսաստանը, որի շնորհով նա ստացաւ քաղաքական անկախութիւն, դարձաւ մի ինքնուրոյն, բարգաւաճ երկիր, այսօր իր զէնքը դարձնում է իր ազատարարի դէմ, այսօր համբուրվում է իր նախկին դահիճ Թիւրքի հետ և ձգտում է նոյն Թիւրքի ձեռքով հարստահարել, աւերել, կործանել իր եղբայրակից երկիրները, քրիստոնեայ ազգերը։

Հանգամանքներն այնպէս են դասաւորվել, որ Բոլգարիայի պէս մի փոքրիկ պետութիւն այսօր յոխորտանքով և պարծենկոտութեամբ է խօսում, որովհետև նրան պատերազմ են յայտարարել չորս մեծ պետութիւններ՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան։ Այս իրողութիւնը շոյում է նոյնիսկ բոլգարների ազգային ինքնասիրութիւնը։

Դելկասէի հրաժարականը մի բոպէ ելկիւռ ազդեց, որ համերաշխութիւնը, համաձայնութիւնը դաշնակիցների մէջ կարող է մռայլվել, բայց այդ հրաժարականը, ընդհակառակը, աւելի ամրապնդեց դաշնակիցների միաբանութիւնը, որովհետև նրանք ոչ միայն նորից փոխադարձ հաւատիացումներ տուին, այլ և անմիջապէս պատերազմ հրատարակեցին Բոլգարիայի դէմ և սլացան Սերբիային օգնութեան։

Անշուշտ, մեծ է լինելու Բոլգարիայի պատիժը. երբ դաշնակիցները յաղթեն, գուցէ նա և դադարէ անկախ պետութիւն լինելուց։ Այսօր Բոլգարիան իր աչքը տնկել է ոչ միայն Մակեդոնիայի, այլ և Կ. Պոլսի վրա, որովհետև Գերմանիան խոստացել է նրան նոյնիսկ Կ. Պոլիսը, որի փոխարէն Թիւրքիային խոստացել է Եգիպտոսը և Թունիսը։ Բայց մի՞թէ Թիւրքերը կը զիջեն բոլգարներին Ստամբուլը, խալիֆութեան աթոռանիստը։

Եւ ոչ միայն Մերձաւոր Արևելքում, այլև Հեռաւոր Արևելքում քաղաքական խոշոր դէպքեր են հասունանում։ Չինաստանը, որ առաջ բռնապետական ինքնակալութիւն էր և յեղափոխութեամբ դարձաւ հանրապետական, այսօր երկնում է նոր պետական յեղաշրջումն կատարել և վերականգնել նախկին միապետական կամ ինքնակալական բէժիմը։ Հանրապետութեան նախագահ Իւանշիկայը երկնում է լինել ինքնակալ Չինաստանի և փոխանորդ Աստուծոյ։ Եապօնիան արթուն կերպով հսկում է այդ ամենի վրա։

Պարսկաստանն ևս խաղաղ չէ։ գերմանական ոսկին ուզի է հանել այդ երկրի սինլբոր տարրերը, որոնք պարզել են իսլամի դրօշակը և նուիրական պատերազմի անունով աւերումն են սկսում երկրի մէջ, սպառնալով մասնաւորապէս և հայերին։

Եւ համաշխարհային այս ալեկոծման օրերում . . . . շատ տառապողը, տանջվողը մի փոքրիկ ազգ է, հայութիւնը, որին ջնջելու են ձգտում թէ Թիւրքիայում, թէ Պարսկաստանում և թէ նոյնիսկ Բոլգարիայում։

Վերջին հեռագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Բոլգարիայի հայերը երկիւղ են կրում իրանց ապահովութեան մասին, երբ բոլգարների դաշնակից Թիւրքական զորքը մտնէ Բոլգարիա։

Եւ տրագիկական դրութիւնն այն է, որ ոչ մի ազգ, ոչ մի երկիր, նոյնիսկ եթէ ցանկանալու լինի, անզօր է օգնութեան ձեռք կարկառել հայերին։

Վայը եկել տարել է մեզ հայերիս,—գոչեց նորերս մեր ականաւոր աշխատակից Ա. Զօպանեանը Պարիզից,—եթէ Բոլգարիան ևս հանդէս գայ իբրև դաշնակից Թիւրքիայի, և մինչ այդ մենք չը պէտք է յուսահատվենք։

Եւ չարագուշակ մարգարէութիւնը կատարվեց։ Բոլգարիան միացաւ Թիւրքիայի հետ, և այսօր հայութեան վըտանգ է սպառնում ոչ միայն Թիւրքիայում, այլ և ուրիշ երկիրներում։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կովկասեան ռազմաճակատի վրա, ծովամերձ շրջանում, Խօփից դէպի հարաւ-արևելք ու Ճորոխ գետի ափին՝ Թօրթում լճից դէպի հիւսիս՝ տաք ընդհարումներ են առաջապահ զօրամասերի միջև։

Արաքս գետի մօտից (Խօրօսանի շրջան) մինչև Մանազկերտ մեր հեծելազնդերը ընդհարումներ են ունենում քիւրդական (համիդիէ) հեծելազօրի հետ, որին մի քանի տեղ պաշտպանում են հետևակ զօրամասերը։ Էկրեշա գիւղի մօտ համիդիէները, չը դայած ստացած օգնութեան, վանվեցին դէպի Գօպալ շրջանը։

Վանի լճի հիւսիսային ու հարաւային ափերին (Արճէշ և Ոստան գիւղերի մօտ) ընդհարումներ են առաջապահ զօրամասերի միջև։

Մնացած զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՆԱՄԱԿ ՀԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՂՈՔԻ ԱՌ ԱԶԳՆ ՀԱՅՈՑ

—

Լօնդոն, 30 սեպտ.

Խնդրանք Մեծն Բրիտանիոյ Կանանց Հայանպաստ Հիմնադրամի գործադիր ժողովին, պատիւ ունիմ ներփակելու այդ հին հաստատութեան՝ հայ մամուլին, ինչպէս նաև ուրիշ թերթերու հաղորդելու համար շարադրած՝ հայ ազգին համակրութեան և թիւրք կառավարութեան իր հայ հպատակաց վրայ գործադրած պաշտօնական եղեռներու և սոքրագործութեանց դէմ բողոքող նամակը։ Այս ընկերութեան ընդհանուր յանձնաժողովը կը բովանդակէ իր մէջ նշանաւոր անձնաւորներու անունները, ինչպէս Լօնդոնի, Հէրիֆորդի, Լիվերպուլի, Սաուրթվորկի, Ուինչեսթրի յարգոյ եպիսկոպոսներ։

ներունը և նմանապէս դերակոմս Բրայսի, որ տարիներով Մեծն-Բրիտանիոյ դեսպանութեան պաշտօնը կատարեց ի Վաշինգտոն, հայկական դատին և հայ ազգի վիճակին քաջատեղեակ է, պարլամենտի անդամ մը. Նօէլ Բաքսթընի, և բժիշկներ, բանաստեղծներ, Ուիլիամ Ուոթսընի նման, սպաներ և արեւելագէտներ՝ ինչպէս նամակագիրս. Տնօրէն ժողովը կարող եղաւ ստոյգ տեղեկութիւններ ստանալու 1895-էն ի վեր Հայաստանի անցից և դարձից վրայ։

Անգլիոյ թերթերը՝ «Times»-էն սկսեալ՝ հայոց այս նոր խաչելութեան և մարտիրոսացման մասին տեղեկութիւններ հրատարակեցին։ Անոնցմէ երկուքը՝ «The Giobe» և այսօրուան «Times»՝ կը պահանջեն, որ Անգլիան հայոց ջարդուելուն համար միայն նահանգային Թիւրք պաշտօնեաներէն, տեղացիներէն և զինուորներէն վրէժխնդիր չըլլայ, այլ՝ նոյնիսկ Թիւրք կաբինէտի անդամները, դաւաճան Թալէաթ-բէյէն, Ենվէր փաշայէն սկսեալ, և անոնց օգնականները իրենց անզգամութեան համար մահուան պատիժով պատժէ։

Պրոֆ. Կ. Յակոբեան

* * *

Դժբաղդ Հայաստանի պատմութեան այս զարհուրելի ճգնաժամին մէջ Անգլիոյ Կանանց Հայանպաստ Հիմնադրամի (Woman's Armenian Relief Fund) յանձնաժողովը այլ ևս չի կրնար վայրկեան մը աւելի սպասել առանց դիմելու ամբողջ քրիստոնէութեան՝ Հայաստանի կրած անօրինակ զրկանքներու և անարդարութեանց համար համակրութիւն և օգնութիւն հայցելու։

Արդարև ժամանակը հասած է, որ բոլոր քաղաքակրթեալ ազգեր և մանաւանդ չէզոք ազգեր յանուն մարդկութեան բողոքեն Թիւրքիոյ կողմէ իր անպաշտպան հայ հպատակաց վրայ ի գործ դրուած ոճիրներէն այս վերջին ամենավատ, անմարդ և ամենատեսակ ոճրին դէմ։ Թիւրքիան դաշնակից պետութեանց դէմ պատերազմ հրատարակելէն ի վեր Հայաստանը մոռացման և լռութեան պատանքի մէջ պահող հատ վարագոյրը ժամանակ առ ժամանակ մասամբ բացուեցաւ, և մենք նշմարեցինք Փոքր Ասիոյ հայ ժողովրդեան ամբողջովին ջնջմանը համար անարձանագրելի զարհուրանք, հայոց վրայ դրականապէս գծուած և իրագործուած կոտորածներ՝ և անոնց տարագրութիւնը դէպի անապատ գաւառներ, որոնց մէջ անխուսափելիօրէն սովամահ պիտի ըլլան, որպէս զի հայոց պատկանող հողերը և ստացուածքը իսլամ եղողները իւրացնեն։ Եւ այս ստատնական քաղաքականութիւնը իր գագաթնակէտը հասաւ, երբ Ամերիկայի միսիոնարներն, որոնք, նրմանը սակաւ տեսնուած դիւցազնութեամբ մը, իրենց ամբողջ կեանքը նուիրած էին երկիրին ու ժողովուրդին, հեռացուելով դուրս արտաքսուեցան։

Մեր սրտերը գանուելեամբ ու մեր աչքերը արցունքով կը լցուին, երբ Ամերիկայի ճանապարհով կը լսենք, որ Վանայ միսիոնարներէն—զորս ճանչցանք և սիրեցինք—ռուս զինուորաց այդ քաղաքը դատարկած ատենը Թիֆլիս ապաստանելու հարկադրուած են, և հոն օգոստոս 17-ին հիւանդ, սրտաբեկ, կարօտ և չքաւոր վիճակի մէջ հասած են։ Իրենցմէ դոկտոր Ա. շրը հիւանդ, դոկտ. Բէյնոլդսի համակրելի կողակցին ազգրը զէշ կերպով կոտրած։ Եւ որպէս զի ողբերգը լրանայ՝ իր ամուսնոյն դոկտորին Թիֆլիս ժամանելէ երկու օր առաջ իր կինը այդ քաղաքին մէջ հոգին կաւանդէ։ Խեղճ դոկտորը երկու տարիէ ի վեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

* * *

Քաղաքն ու մարդիկ հեռու մնացին
Ու մենք էլ հեռու պատնէշներից դուրս,
Որոնց դռները անաղմուկ բացին,
Ու մենք սլացանք պատնէշներից դուրս,
Իսկ կեանքն ու մարդիկ հեռու մնացին։

Ճօճվում է կառքը լայն փողոցներում,
Լոյսեր ու մաքեր խառնում իրարու.
Խառնում իրարու մաքեր-ցնորում
Ու սլացնում է մարդկանցից հեռու
Մեղմիւ ճօճումով լայն փողոցներում։

Սիրուն զուարդ կախվել է թեխս,
Անուշ հայացքդ մարել մութի մէջ.
Մեղմ տարուբերվիր. գուցէ թեթեւս,
Գուցէ թեթեւի յոյզ ու ելևէջ...
Մեղմ տարուբերվիր՝ զուարդ թեխս։

Լէյլի

ՊՈՂՊԱՏԷ ԱՐԾԻՒԸ

(Օդաչու Պէգուի անմահ յիշատակին)

Իմ ճամբէն անսփ, իմ ճամբէն անծայր,
Շուրջը անթափանց, սև՝, խաւար դիշեր...
Մոռացած ծնող, և քոյր, և եղբայր,
Կուզէի՝ ոչ օք ինձ էլ չը յիշեր...

է, որ Ամերիկայի նահանգները պատելով Վանի մէջ հաստատուած քօլէջին համար նպաստ և դրամագլուխ հայթայթելու պատերազմը կը մղէր և ճիշդ այս պահուն նա աճապարանք Պետրոգրադի վրայէն Վանի մէջ գտնուող իր հօմը, այսինքն բնակավայրը կը վերադառնար։

Պարտինք ողբալ ու կողբանք Հայաստանի համար մեր բոլոր հիացումներուն և յոյսերուն ու ջանքերուն խորտակուելուն վրայ, և մեր պարտքն է բողոքել ու կը բողոքենք ի լուր աշխարհի, և այս վերջին յոռեգոյն ոճրին համար Թիւրքիան և Գերմանիան պատասխանատու կը բռնենք։

Այսօր մենք աշխարհիս ամեն կողմը ապաստանարան փնտռող՝ անջատուած հայոց մեր ճշմարիտ խորին և եղբայրական համակրութիւնը կը մատուցանենք և միանգամայն հրապարակաւ մենք իրենց՝ հայոց բարեկամները թէ անհատաբար և թէ հաւաքաբար՝ կերդնուինք, որ պիտի չանանք—որ ստիճան որ այս մեղի կարելի լինի—Հայաստանի համար ազատութիւնը, արդարութիւնը, ապահովութիւնը և քաղաքային իրաւունքները երաշխաւորելու՝ այն մեծ խաղաղութեան կարգադրութեան պահուն, որ ուշ թէ կանուխ Եւրոպական պատերազմին վերջ պիտի տայ։

Ձերդ անկեղծաբար

Պատուոյ դանձապահ Կանանց Հայանպաստ Հիմնադրամի՝

տ. Մաղբլին Քոլ

Լոնդոն (Անգլիա)

ՀԱՑՈՑ ԲՆԱԶՆԶՈՒՄԸ ԹԻՒՐՔԻՈՑ ՄԷՋ

Թիւրքերու կողմէ գործուած բռնութեանց մասին գերմանական վկայութիւն մը խիստ հաղուագիւտ է։ Ահա թէ ինչու վերարտադրելու արժանի է «Սօսնէնեաուֆգանգի» ուղղուած հետեւեալ նամակը։ Նա կը խօսի դէպի երկրի ներսերը տարագրուած հայոց կրած տանջանքներուն մասին, օրանց կարելի է բաղդատել միայն նման հալածանքներու ենթակայ յոյներուն կրածները։

* * *

Հայերով լի մեծ խան մը գտանք ի Բէյնէլ-Զօր, անապատին մեծ քաղաքը, Հալէպէն կառքով եօթն օր հեռաւորութեամբ. սենեակներուն մէջ, տանիքներուն վրայ, անցքերուն մէջ հայերը դիզուած էին։ Ընդհանրապէս կիներ և տղաք էին. խիստ սակաւաթիւ այրեր կային։ Անոնք պառկած էին, վերմակներու ներքև, ամենուրեք օր քիչ մը շուք կրցած էին գտնել։ Զէյթունի կողմերէն՝ ֆուտնուզցիներ էին։ Անձնապէս ինծի ծանօթ օրիորդ մը հետեւեալը պատմեց։

Օր մը գիւղն եկող ժանդարմաները բաղմաթիւ անձեր իրարմէ զինուոր ձերբակալեցին և տարին։ Զորս ժամ միջոց տրուեցաւ մնացեալ բնակչութեան՝ լքելու իր բնավայրը, հետը տանելով ինչ որ կրնար, մէջը ըլլալով նաև բեռնաբարձ անասունները։ Պայմանաժամին լրմանը ամենքը ստիպուեցան մեկնիլ։

Սկիզբը, քանի որ լեռներուն մէջն էին, և քանի որ դեռ ուռենի պաշար կար, տարագիրները չափազանց չտառապեցան։ Հաց խստացուած էր անոնց, բայց շուտով իրենց տրուած դոյզն օրապահիկը ընդունելով՝ օրական 150 կրամ բուլղուր (եփուած ցորեն) միայն տրուեցաւ։ Այսպէս չորս օր ճամբորդելէ վերջ Դէյր-էլ-Զօր հասան։ Երեք շաբաթ է, որ հոն կը մնային, սպասելով որ վճռուի իրենց ճակատագիրը։ Անոնք այլ ևս դրամ չունէին, և թիւրքերն ալ ոչ մի անունդ չէին տար։

Յաջորդ օրը,—կը շարունակէ այն գերմանցի տիկինը, որ գրած է սոյն նամակը,—հասայ հայոց մեծ բանակավայր մը՝ կազմուած այծի մորթէ շինուած քիւրդական վրաններէ։ Տարագիրներուն մեծագոյն մասը

Ուզում եմ լինել «անխի՛ղճ» և «անգութ»,
Գինալ ու գրանել զօրքը թշնամու.
Ուզում եմ թափել ռումբերի կարկուտ,
Ջնջելե՛լ նրա գլուխն արիւնարբու...

Երկինքը, որպէս մի հանգած փարոս,
Գըրկե՛լ եմ ամուր, կարող ձեռքերով,
Արհամարհում եմ դըժոխք, տարտարոս,
Դըրախան եմ ծաղրում ես իմ երգերով...

— Լըսի՛ր, ակնջ դիր իմ ազատ երգին,
Ազատ ընութիւն, ես քե՛զ եմ սիրում.
Սիրում եմ քո վեհ տարերքը ուժգին,
Որ հե՛ղկ սըրտերին տարսափ է բերում...

Սիրում եմ ես ձեզ, սիգապանծ լեռներ,
Սիրում քարացած ձեր հըպարտ հոգին,
Որ մի՛շտ ձգտում էք դէպ բարձր, դէպ վե՛ր
Եւ զգուանք նետում ըստոր աշխարհքին...

Սևամած երկնի սևաթոյր ամպեր,
Ժըպտացէք հոգուս կայծակէ ժըպտով.
Կարկուտ թափեցէք, ճարճատէք շանթեր,
Թըշնամու վե՛րջն եմ ցանկանում շուտով...

Ուզում եմ լինել «բի՛րտ,անխի՛ղճ,անգութ»,
Գինալ ու գըրանել օրջը թշնամու...
Ուզում եմ թափել ռումբերի կարկուտ,
Եւ ջարդել նրա գանդն արիւնարբու...

Թոյլերին թողած և խի՛ղճ, և օրջնք,
Ես խնդն եմ սիրում ցասկոտ բընութեան.
Զարկե՛ք,կայծակներ,զարկեք ու փըշրեք
Դարաւոր շէնքը զազի՛ր բըռնութեան...

Սեդրակ Յովհաննիսեան

ստիպուած էր պառկիլ հրակէզ արևին ներքև, այրող աւազին վրայ։ Մեծաթիւ հիւանդներուն պատճառով թիւրքերը օր մը հանգիստ տուած էին։ Իրենց զգեստներէն կերևէր, թէ այդ թշուառները ժամանակին բարեկեցիկ կեանք մը վարած էին։ Զէյթունի շրջակայից ուրիշ գիւղի մը՝ Գեբէնի բնակիչներն էին, օրական 5—6 հոգի կը մեռնէր, երախայ և չափահաս։ Նոյն պահուն թաղած էին երիտասարդ կին մը, մայր ինն տարեկան աղջկան մը։ Ինծի պատմեցան այդ աղջիկը հետս տանիլ։

Յաջորդ օրը կը հանդիպիմ հայերու ուրիշ բանակավայրի մը. միևնոյն տանջանքները, ցաւի նոյն պատմութիւնները. «Ինչու մեղի չեն սպաններ,—կը հարցնէին անոնք։—Օրական կաթիլ ջուր չեն տար մեզի. մեր տղաքը ծարաւէ կուլան. գիշերը վրայ կը հասնին արաբները, որ կը գողնան մեր անկողինները, մեր զգեստեղէնները, կառնանգեն երիտասարդ աղջիկները, կը բռնաբարեն կիները։ Եւ եթէ չենք կրնար քալել, թիւրք ժանդարմաները կը ծեծեն մեզի։ Կիներէ ոմանք գետը նետուեցան բռնաբարումէ ազատուելու համար. անոնցմէ մի քանին գիրկերնին ծծկերներ ունէին։

Աւելի հեռուն, Ամանուսի մէջ, հաղընցիներու ուրիշ կարաւան մը. դեռ իրենց ճամբորդութեան սկիզբն էին և դեռ չէին տառապեր։ Ունէին կառքեր, անդեղէն, ձիեր, քանի մը կովեր, նոյնիսկ ուղտեր։ Բայց օրքա՞ն պիտի տեւ այս յարաբերական բարիքը, երբ անոնք անպատ հանին։

* * *

Գերման հանդէսը կաւելացնէ. «Վանի շրջաններուն մէջ եկեղեցիները և վարժարանները քանդուած են, ինչպէս նաև տուները. ամեն ինչ աւերուած են։

ՀԱՄԱԹԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Զալայ գիւղի շրջանում, Միտավայի խճուղու վրա, մենք երէկ նորից վանեցինք գերմանացիների կատաղի յարձակումը։

Ֆրիդրիխշտատդի և Նակօբշտատդի շրջաններում և Դվինսկի շրջանի զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

Բագինսկոյէ լճից դէպի հարաւ մեր զօրքերը տեղ-տեղ առաջացել են դէպի արևմուտք։ Գերմանացիք յաճախակի դիմում էին հակայարձակումների, բայց շատ դէպքերում վանվեցին խոշոր կորուստներով։ Պոստավայի մօտ, Դուկի գիւղի շրջանում, տեղի ունեցած տաք կռուից յետոյ մենք գիւղը գրաւեցինք։

Բարանովիչից դէպի հարաւ-արևելք մեր զօրքերը կռուով անցան վերին Շարա գետի արևմտեան ափը, տիրեցին Մազուրկի դիմացի գագաթները և յետագայ կռիւներում նորից ձեռք ձգեցին 20 օֆիցէր, 1658 զինուոր և 3 գնդակացիր։

Ստիրի գետի ձախ ափում կռիւները շարունակվում են։ Լրացուցիչ տեղեկութիւնների համաձայն՝ այստեղ մեր վերցրած գերիների թիւը հասնում է 67 օֆիցէրի և 2025 զինուոր։

Մնացած զօրաճակատում, բացի Օլէկսինէցի մօտ տեղի ունեցած ի նպաստ մեր կռիւներից, ոչինչ էական բան չը պատահեց։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նոր Օլէկսինէցի շրջանում, Տարնոպոլից 30 վերստ հեռաւորութեան վրա, Գալիցիայում, երէկ մենք շեշտակի գրոհով վերցրինք հակառակորդի դիրքերի մի մասը։ Նոյնպէս ձեռք ձգեցինք նրանց դիրքերի մի մասը Լոպուշնից դէպի արևելք ընկած շրջանում։ Մի օրվայ ընթացքում այդ կռիւների մէջ մենք գերեցինք 128 օֆիցէր և մօտ 7500 զինուոր, ձեռք ձգեցինք 2 գաւութից և շատ գնդակացիրներ։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ՀՌՕՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Տիրոլում և Տրէնտինոյում մենք շարունակում ենք աջողութեամբ առաջանալ։ Զուդիկարիա հովտում մենք գրոհ տալով գրաւեցինք թշնամու դիրքերից մինը Մօնտէ-Մէլինոյի մօտ։ Սուգանօ հովտում մենք գրաւեցինք Մօնտէ-Սէտալէն։ Կորտեվոլէի վերին մասում և Ֆօլցարէգոյի շրջանում մենք շարունակեցինք մեր աջող գործողութիւնները, օգնեցրինք թշնամու խութերը, ականներ պայթեցրինք ընդարձակ տարածութեան վրա։ Մօնտէ-Լբանա հովտում մենք հարկադրեցինք թշնամուն նահանջել Դօնիա հովտի մուտքի մօտ թշնամին փորձեց յարձակում գործել մեզ վրա, բայց վանվեց խոշոր կորուստներով։

Իզոնցոյի և Կարսոյի շրջանում մեր արտիլերիայի գործունէութիւնը շարունակվում է։

Երէկ մեր օդաչուները նորից թռիչք կատարեցին Կարսոյի վրա, ռումբեր նետեցին Այսովիցէի օդանաւատեղի և թշնամու զօրամասերի վրա Տէմիրկի ու Վիրուլէի մօտ և վերադարձան անվնաս։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ՍՏՕԿՀՕԼՄ.—Շվէդական «Գվալէն» սուզանաւն երէկ առաւօտեան ենթարկվեց Իսատդի մօտ գերմանական ռազմանաւի ռմբակոծութեան, որի ժամանակ նաւաստիներից մինը ծանր վիրաւորվեց։ Բերլինի շվէդական դեսպանը կտրուկ բողոք յայտնեց։ Իսկոյն, այդ միջադէպի մասին պաշտօնական հրատարակութիւնից յետոյ, գերմանական դեսպանն այցելեց շվէդական միջնորդ-նախագահին և յետոյ արտաքին գործերի մինիստրին և յայտնեց իր անձնական խորին ցաւակցութիւնը եղածի առիթով։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Զինուորական մինիստրի իշխանութեան տակ պաշտօնավարող գենեռալ-ադիւտանտ Ռենէնկամպֆը արձակվում է պաշտօնից տնային պատճառներով—համազգեստով ու կենսաթոշակով։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Արդարադատութեան մինիստրութիւնը կից հատատված մի ինչվարչական խորհրդակցութիւնը, ընդունելով որ բոլգար ժողովրդական մասսաները չեն ցանկանում պատերազմ Ռուսաստանի դէմ, անհրաժեշտ գտաւ Բոլգարիայի վերաբերմամբ տարածել միայն սահմանափակումները, որ Ռուսաստանը սահմանել է թշնամի տէրութիւնների վերաբերմամբ, այսինքն 1914 թ. յուլիսի 28-ի հրամանը այն կանոնների մասին, որոնցով Ռուսաստանը զեկավարվելու է պատերազմի ժամանակ, 1914 թ. նոյեմբերի 15-ի հրամանը՝ թշնամի երկիրներին վճարումներ չանելու մասին և 1915 թ. յուլիսի 20-ի մինիստրական օրագիրը՝ թշնամու ապրանքների մասը 100 %-ով աւելացնելու մասին, չը տարածելով միևնոյն ժամանակ բոլգարահպատակների վրա այն սահմանափակումները, որ սահմանված են մնացած կռուող պետութիւնների հպատակների համար։

ԿԻԷՎ.— Եկան Բոլգարիայից առաջին փախստականները Ռումինիայով անցնելու ժամանակ նրանք զգացվել են դէպի իրենց ցոյց տուած ուշադիր վերաբերմունքից։

ԱԹԷՆՔ.— «Էսնօս» լրագիրը գրում է. «Ըստ երևոյթին ներկայումս հարց է ծագել նոր լայն տէրիտորիալ զիջումների մասին, որ անում են Օսմանեանին համաձայնութեան պետութիւնները՝ չէզոքութիւնից հրաժարվելու համար, ըստ որում այդ պետութիւնները խոստանում են միաժամանակ Սօլուն ուղարկել 300,000 զինուորից բաղկացած զօրաբանակ. սակայն, այն հանգամանքը, որ դաշնակիցները ձգձգելով են զօրքերը ուղարկում Սօլուն, դրգում է Օսմանեանին չը վստահել ընդունելու իրան ուղղված առաջարկութիւնները։

«Էսթիա» լրագիրը գրում է. «Շնորհիւ համաձայնութեան պետութիւնների նոր առաջարկութիւնների, Օսմանեանը կարող է տիրել ամբողջ բոլգարական Թրակիային, նրա սահմանները կարող են հասնել համարեա մինչև Կ. Պոլիս, նա կը ստանայ Կիպրոսը և հոդաբաժիններ Փոքր-Ասիայում։

ՏՕԿԻՕ.— Պրեմիէր-մինիստրը կոկումինոյի ժողովում յայտնեց, որ Եապոնիայի մասնակցութիւնը Գերմանիայի դէմ սկսված պատերազմին, որ արտայայտվեց Ցինդաոն գրաւելով, նաւատորմը Հնդկական օվկիանի հարաւային ջրերը ուղարկելը, Ռուսաստանին հնարաւորութիւն տալը՝ ուղարկելու Սիբիրի զօրքերը Գերմանիայի դէմ և նրան զէնք ու ռազմամթերք հայթայթելը—այս ամենը լիակատար իրաւունք են տալիս եապոնիային մասնակցել պատերազմից յետոյ հաշտութեան կոնֆերէնցիային։

ՀՌՕՄ.— Պապը ստացաւ բէլգիական թագաւորի պատասխանը իր սեփականագիր նամակին, որով նա խնդրել էր թագաւորից նախաձեռնութիւն վերցնել հաշտութեան բանակցութիւնները սկսել տալու մէջ։ Թագաւորը պատասխանում է բացասաբար, շնորհակալութիւն յայտնելով պապին, որ խոստանում է գործ դնել իր ազդեցութիւնը գերմանացիների վրա՝ դրդելու նրանց հեռանալ բէլգիական երկրից հաշտութիւն կնքելու դէպքում։ Թագաւորը իր նամակը աւարտում է՝ յայտնելով, թէ վար չի դնի զէնքը, քանի նրա երկիրը կը գտնվի սարսափելի մէջ։ Պապը խիստ յուսախափված է իր դիմումի հետևանքից։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Պաշտօնական «Վիկտորիան» յայտնում է, որ ի պատասխանի բոլգար կառավարութեան ձեռք առած միջոցների Սօլունից Ռումինիա փոխադրվող ապրանքների առաքումը դադարեցնելու վերաբերմամբ, Ռումինիան որոշել է թոյլ չը տալ ապրանքներ փոխադրել Ռումինիայի վրայով դէպի Բոլգարիա։

ԼՕՆԴՕՆ.— Բէյէրի գործակալութիւնը իրազեկ եղաւ, որ արտաքին գործերի մինիստրութիւնը մտադիր չէ այժմ հանդէս գալ Յունաստանի առաջ Կիպրոսը զիջելու առաջարկութեամբ. այնու ամենայնիւ լիակատար հիմք կայ հաւատալու, որ Մեծ-Բրիտանիան պատրաստ է զիջել Կիպրոսը Յունաստանին, եթէ վերջինս օգնութեան հասնի Սերբիային զոյութիւն ունեցող սերբ-յունական դաշնակցական հիման վրա։ Այդ հանգամանքը ապացուցանում է, որ դաշնակիցները պարտաւոր են զոհաբերութիւններ անել, որպէսզի ապահովեն Սերբիային ամեն տեսակ հնարաւոր օգնութիւն ցոյց տալը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 հոկտեմբերի

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ. — Այրվեց նաւահանգիստը։ Կրակին ճարակ դարձան շատ ապրանքներ։ Նախնական հաշուով վնասները հաւատարվում են $1^1/_2$ միլիոն բուլլու։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ (Եկատերինոսլաւի ն.)— Հողատէր Վասիլէնկոն զէմստվային նուիրեց 7 դեսեատին հող և 75,000 ր.՝ հիւանդանոց կառուցանելու համար։

ԿՕՍՏՐՕՄԱ.—Վաճառական Կոլոդէզնիկովը կտակեց քաղաքին 70,000 ր.՝ աղքատ դասերի համար էժան կացարաններ կառուցանելու։ Քաղաքը արձան է կանգնեցնում նուիրողին։

ԼՕՆԴՕՆ.— Ասկվիթը երէկ գիշեր հանգիստ անցրեց։

ՄՕՍԿՎԱ.— Կայարաններում կուտակված մեծաքանակ վագոնների հարցը կանոնաւորելու համար եկաւ ներքին գործերի մինիստրը և իլաւ քաղաքապետի մօտ, ուր և երկաթուղային կառավարչի ներկայութեամբ կայացաւ խորհրդակցութիւն։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.— Երէկ երեկոյեան պայթեցին երկու ական, ծովափին վիրաւորվեցին զինուոր և օֆիցէր։ Քաղաքում պտկվել են մի քանի տանիք, փշրվել են շատ ապակիներ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

◆ Վիլնայում գերմանացիք թոյլ չեն տուել ռուս ազգաբնակութեանը համբուրել ս. Աստուածածնի պատկերը, որի պատճառով սկսվել են անկարգութիւններ։ Քաղաքապետ Պոլը կանչել է զօրքեր, որոնք և կը բռնակալեն ամբոխի վրա։

◆ Ռուսաստանում ուսանող բոլգարները միջնորդել են կառավարութեան առաջ առանձին շրջան որոշել իրանց բնակութեան համար։

◆ Ներկայումս ռուսաց ռազմաբեմի վրա, լաւատեղեակ անձանց կարծիքով, գերութիւնը Դվինսկի շրջանում անհամեմատելորէ է, քան Ռիգայի շրջանում։ Թշնամին չէ կարողանում կալ հաստատել այդ երկու շրջանների միջև՝ ակտիվ գործողութիւնների դիմելու համար։ Ռուս զօրքերը ստիպանաբար ետ են մղում ուժեղ թշնամուն։ Հաւանական է, որ թշնամին բոլորովին հեռանայ Բարանովիչի ռազմավայրից։ Պոլէսիայի մօտ ռուսական առաջխաղացումը շարունակվում է։ Վճռական ճակատամարտի ժամանակը մօտենում է։

◆ Մոսկվայի շրջանում ներկայումս կուտակվել են աւելի քան 6000 վագոն ապրանքներով։ Այդ առիթով Մոսկվա է մեկնել ներքին գործերի մինիստրը։

◆ Պետրոգրադում ռումինական կառավարութեան ներկայացուցիչը շատ կարևոր խօսակցութիւն է ունեցել Մերձաւոր Արևելքի բաժնի կառավարչի հետ։

◆ Սերբիայում աւստրո-գերմանական առաջխաղացումը կանգնեցվեց ամբողջ ռազմաճակատի վրա։ Բոլգարները փչացնում են սերբական երկաթուղագծերը։

◆ Հաղորդում են, որ Դէդէաղաջում ափ են իջել իտալական զօրքեր։ Ֆրանսիական նաւատորմը ռմբակոծում է Դէդէաղաջը։

◆ Կայզերը բոլգար զօրքին ուղղած կոչի մէջ հաւատացնում է, որ Բոլգարիան մօտիկ ապագայում դառնալու է տէր ու իշխան Բալկաններում, թագաւորելով Սև, Եգէյեան և Ադրիատիկ ծովերի վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք 1) Խարկովից, Շուշանիկ Կուրղինեանից 70 բուբլի, որից 25 բուբլին իր կողմից նուիրված, իսկ 45 բուբլին՝ իր բարեկամներից, իր տօնի օրը ստացված նրանցից. 2) Թիֆլիսում, Վասիլիյ Փուղինեանից՝ 10 բուբլի։

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Շաբաթի, հոկտ. 7-ին, երեկոյեան գնացքով մեկնեց Էջմիածին՝ այնտեղից Իգդիր և Վան գնալու համար, Վանի շրջանի զինուորական նոր նահանգապետ փոխ-գնդապետ Ալիքէդ Իսսիֆովիչ Տէրմէնը։ Նրան ուղեկցելու

են Վան հայկական միլիցիան, բաղկացած 200 կամաւորներից՝ խմբապետութեամբ Արմենակ Եկարեանի և 100 կօզակներ։ Նահանգապետը ներկայանալու է Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ինչպէս և միլիցիան, Վեհի օրհնութիւնը ստանալու։

Այս առիթով մեզ ուղղված հաղորդումներին, թէ արդեօք նախկին նահանգապետ Արամը արձակված է պաշտօնից թէ ոչ, կարող ենք այս պատասխանել, որ, ինչքան մեզ յայտնի է, Արամի պաշտօնից արձակման հրամանագիրը տանում է նոր նահանգապետը, որին Արամը պէտք է յանձնէ բոլոր գործերը։

Ցանկանք, որ նահանգապետը, իւրան գործակից ունենալով տեղացի հայերից կազմված միլիցիան և գիտակ, հմուտ ու ժողովրդասէր անձինք, կարողանայ կեանքի կանչել աւերված երկիրը և հայ ժողովուրդը կարողանայ վերադառնալ իր օջախները։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

—

Փախստականներին Թիֆլիսում օգնելու համար բաց թողած միջոցներով բացվում է նոր հիւանդանոց Հայաստանից փախած կանանց և երեխաների համար։

—

Գանձակի նահանգապետը հեռագրով յայտնել է Քաղ. Միութեան տեղիս ճիւղի լիազօրին, որ Գանձակի նահանգում գտնված 10,000 փախստականներից 8000-ը զուրկ է տաք հագուստից։ Դրանցից 2000-ը աղամարդիկ են, 3000-ը կանայք, նոյնքան էլ երեխաներ։ Սպիտակղէնի պակասութիւն ունեն ամենքը։

—

Վերջերս Ալէքսանդրօպոլում սկսվել են սաստիկ ցրտեր։ Մեր ստացած մի նամակից մենք իմանում ենք, որ այնտեղ նոյնիսկ ձիւն է եկել։ Բայց չը նայած դրան Ալէքսանդրօպոլում ապաստանած փախստականները գտնվում են վրանների տակ։ Այժմ, Ալէքսանդրօպոլի քաղ. կոմիտէը, դիմել է Քաղ. Միութեան կոմիտէին, խնդրելով ձմերային բարակներ կառուցել Ալէքսանդրօպոլում։

ՕՐՎԱՑ ՆՇԱՆԱԲԱՆԸ

—

Երբ վերջանում է հին երաշը և կործանվում են մեր երևակայութեան կառուցած օդային ամրոցները, անհրաժեշտ է գոյութեան, պայքարի և աշխատանքի նոր ուղեգիծ առաջ մղել. այդ նոր ուղեգծի պահանջը զգացվել է դեռ չորս ամիս առաջ, յուլիսեան դաղթականութիւնից անմիջապէս յետոյ։ «Մշակը» այդ չորս ամսվայ ընթացքում հնարաւորութեան սահմաններում աշխատել է լուսաբանել նոր հանգամանքները և պարզաբանել է հին գործունէութեան սխալները. բայց չի կարելի անվերջ եղած-կատարվածը հոլովել. այդպիսով միայն ապագայ պատմաբանին կարելի է ուրախացնել նիւթի առատութեամբ։ Կարևոր է մտածել նաև գալիք օրերի մասին. պէտք է պատրաստվել հնարաւոր անակնկալներին, պէտք է զգաստ և ուշիմ լինել՝ աւելի ծանր վերքեր չը ստանալու համար։ Այդ պէտք է անել հասարակական ծառայութեան նուիրված անկախ մամուլը։ Եւ մենք տեսնում ենք, որ հայ օրաթերթերն արձագանք են տալիս այդ պահանջին։

Ինչպէս յայտնի է, սեպտ. 11-ին նշանակվել են Վանի, Դիարբեքիրի և Բայազիդի նոր կառավարիչներ, որոնցից առաջինը երկուսը հմուտ վարչագէտներ են, վարել են պատասխանատու պաշտօններ Հեռաւոր Արևելքում, իսկ երրորդը յայտնի օրիէնտալիստ է, Փոքր Ասիայի ազգութիւններին և նրանց լեզուին ծանօթ մէկը։ «Մշակը» և «Արևը» արձանագրեցին նոր կառավարիչների նշանակման փաստը, իրանց կողմից արին որոշ լուսաբանութիւններ, ցոյց տուին նոր նշանակվածների կատարելիք գործը և բարեմաղթեցին, որ նրանք ուղղամտութեամբ կառավարեն նոր նուաճված գաւառները։ Ի հարկէ, նրանք «ժամանակաւոր» կառավարիչներ են, բայց պատերազմական դրութեան պատճառով երկարատև կարող է լինել նրանց կառավարչական գործունէութիւնը. ուստի և պէտք էր որ մենք հետաքրքրվէինք, թէ ովքե՞ր են նշանակվածները, քանի որ կառավարչական անձից շատ բան է կախված, նամանաւանդ ներկայ խառնաշփոթ շրջանում։

Անշուշտ մի անդամից, կախարդական դաւազանի մի հարուածով նոր նուաճված գաւառներում չէ կարելի ամրապնդել օրէնքները և արդարութիւնը. դրանցով չէ ապահովվում և երկիրը, մինչև չը վերջանայ պատերազմը. ուրեմն գաղթածների ամբողջական վերադարձի մասին այժմ խօսք անգամ լինել չէ կարող, քանի որ ոչ մի առհաւատչեայ չը կայ, թէ չեն կրկնվի դեկտեմբերեան և յուլիսեան դէպքերը։ Բայց միաժամանակ և չէ կարելի բոլորովին անփնամ ու բաղդի բերմունքին թողնել երկիրը. անհրաժեշտ է այն պաշտպանել և պահպանել. պաշտպանել այնտեղ մնացած ազգաբնակութիւնը, պահպանել գաղթածների թողնված սեփականութիւնները, հասատութիւնները, կուլտուրական կօթողները և գիւղատնտեսական հարստութիւնները։ Դրանք անհրաժեշտ են, որպէս զի յետոյ հնարաւոր լինի վերակենդանացնել խաղաղ և անդորր կեանքը։ Բայց ո՞վ պէտք է լինի պաշտպանողը. նոր կառավարիչնե՞րը, որոնք և պէտք ունենան իրանց միլիցիաները, կազմված տեղացիներից։ Վանի շրջանի համար արդէն կազմված է միլիցիան գլխաւորութեամբ Վանի ինքնապաշտպանութեան հերոս Արմենակ Եկարեանի. երկրին քաջ ծանօթ և երկիրը սիրող այդ հերոսը կարող է աջողութեամբ պաշտպանել և պահպանել այն մինչև բնակիչների վերադարձը։ Պէտք է միայն օգնել նրան, աւելորդ արգելքներ չը դնել նրա խմբի առաջ, դրանով միայն անոգուտ դանդաղումն է գոյանում։

Այդպիսով, ուրեմն, օրվայ նշանաբանն է՝ պաշտպանել եւ պահպանել երկիրը։

Եւ այս նշանաբանն աւելի ընդարձակ է և ընդգրկում է մեր կեանքի միւս երևոյթներն ևս, որոնց մասին յետոյ։

Գ. Տ.-Ռ.

ԵՐԲ Է ՑԻՇՎՈՒՄ ԱԶԳԱՑԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԻՒՆԸ

—

Այս էջերում թէ մեր և թէ ուրիշների կողմից շատ է խօսվել այն անբնական փոխյարաբերութիւնների մասին, որ գոյութիւն ունի հայ ժողովրդական դանդաւածի և հայ ունևոր, բուրժուա դասակարգի միջև։ Մի դասակարգ, որ իբրև թէ կոչված է իր ուսերին վերցնելու ազգային ներկայացուցչութեան պատասխանատու պաշտօնը՝ մեր մէջ խուսափում է այդ դերից, անգիտանում է իր ազգային պարքը, հրաժարվում է առնչութիւն ունենալ իր ծնող մարմնի հետ։ Այսքան հեռու մնալով հայութեան ընդհանրութիւնից՝ այդ դասակարգը իր բարեկեցութիւնը դարձնում է այնպիսի եղանակով, որ հայ անունն առելի է դարձնում հարեան ազգերին։ Այս հանգամանքը, ասել ենք մենք այս էջերում, պէտք է որ ստիպէր հայ բուրժուազիային երախտապարտ լինել դէպի հայ ժողովուրդը, որ յանիրաւի նրա արարքների պատճառով բամբասվում է և հալածվում. սակայն մենք հրապարակում չենք տեսնում նման մի բան։ Հայ բուրժուազիան աւելի ամուր է փարում խորթացման ուղիին և իր նիւթականը յայտարարում միակ փրկարար ու կենսատու նեցուկը մեր յեղյեղուկ և անկայուն միջավայրում։ Աւելի մեծ կարճատեսութիւն անկարելի է երևակայել։ Դա կարճատեսութիւն է, որ դէպի խորխորատն է առաջնորդում հայ բուրժուազիային իր կուտակած սեփականութեամբ հանդերձ։ Այդ բուրժուազիան երբէք չը պիտի մոռանայ, որ մենք չենք ապրում մի հասարակակարգի մէջ, երբ սեփականատիրոջից չեն հարցնում նրա ազգային պատկանելիութիւնը։ Այս երկրի պետականութիւնը դեռ այդ ասիճանի հասունութեան չէ հասել և արհաւիրքի ժամին պաշտպանութիւն է ցոյց տրվում ոչ թէ սեփականութիւնը անխիբ, այլ թէ ով է նրա տէրը։ Տասը տարի առաջ հայ բուրժուազիան ցայտուն կերպով զգաց այդ՝ իր կաշւի վրա, և այն ժամանակ նա խնկարկում էր հայ ժողովրդի ծոցից ելած պաշտպաններին։ Այդ ժամանակ նա զգաց ու տեսաւ, որ ինքն առանձին անզօր է հակառակութեամբ եռող միջավայրում, իսկ զօրաւոր՝ երբ կրթված է հարազատների մասսայական պաշտպանութեան վրա։ Հին դասերն նորից մոռացվել է, և ի զուր։ Այսօր մենք վայրկեաններ ենք ապրում, որ միայն հայ ժողովրդի ֆիզիքական գոյութեամբ և ձեռնտուութեամբ կարող է յարատևել մեր կեանքը և անվտանգ մնալ մեր ունեցածը։ Ով այսպէս չէ դատում, նա իր աչքերի տակ վիհ է փորում և դէպի կործանման անդունդը քայլում։ Այսօր հրամայական պահանջ է հայ ժողովրդի հետ լինել, նրան սպասաւորել և նրա կենդանութեամբ կենդանի լինել։

Բայց ինչու՞ նորից սկսեցինք խորհրդածել հայ բուրժուազիայի արատների մասին։ Պատճառը մի տեղեկութիւն էր, որ կարդացինք մայրաքաղաքի թերթերից մէկում։ Ահա այդ տեղեկութիւնը. «Բացառութիւն օրէնքից. Բեսսարաբիայում՝ Պետ. Դումայի անդամ Դէմեանօվիչի միջնորդութեամբ 1915 թ. փետրվարի 2-ի սահմանափակող օրէնքը չը պիտի տարածվի 29 կալուածատէր հայերի կայքի վրա։ Այդ հայերն Աւստրիայի նախկին հպատակներից են և նրանցից 7-ը կրում են Դէմեանօվիչ ազգանունը, իսկ միւսները Դէմեանօվիչների ազգականներն են» («Н. В.» № 14309)։ Հայերից շատ քչերը գիտեն, որ II, III և IV Պետ. Դումաներում աջակողմեան պատգամաւորների շարքում աթոռ է գրաւում մի հայ. դա այս տեղեկութեան մէջ յիշված հարուստ Դէմեանօվիչն է, որ ընտրվում է Պուրիշկեվիչի հայրենիքից։ Երբևիցէ Դէմեանօվիչը յիշե՞լ է իր հայութիւնը։ Ո՛չ։ Նա լռել է անգամ այն ժամանակ, երբ III Պետ. Դումայում, կովկասեան հարցանման ժամանակ, իր համախոհ Պուրիշկեվիչն . . . . . սեր էր արտայայտում հայութեան հասցէին, հայհոյում էր մեզ և շղթաներ էր պահանջում մեզ համար։ Հիմա Դէմեանօվիչը յիշել է իր ծագումը, յիշել է, երբ պէտք է փրկել 29 իր նմանների կալուածները։ Զէ որ 1915 թ. փետրվարի 2-ի օրէնքը գալիս է վանդելու մեզ թշնամի պետութիւնների հպատակների կայքը։ Ահա այդ վտանգի դիմաց Դէմեանօվիչը յանկարծ զօրով է զգացել դէպի իր ծագումը և հայ կոչվելն ընտրել իր համար փրկութեան խարիսխ։ Հիմա նրա ազգականների կայքը կը մնայ անձեռնմխելի։ Հայ անուան հովանու տակ չի պակասի Դէմեանօվիչների և ոչ մի ծղտաբ։

Իսկ ինչպէս է ստեղծվել այդ դրութիւնը, որ Դէմեանօվիչները՝ օտարահպատակ լինելով հանդերձ՝ մնում են տէր ու տնօրէն իրանց սեփականութեան։ Այդ դրութիւնը ստեղծվել է թիւրքահայերի շնորհիւ։ Զը լինէր նրանց համակրութիւնն ու աջակցութիւնը ռուսական զէնքին՝ Դէմեանօվիչի հայ լինելը չէր փրկի նրա ազգականների սեփականութիւնը։ Այդ սեփականութիւնը անխախտ է մնում հարիւր հազարաւոր հայերի արեան ու արցունքի գնով։ Բայց զգում է այդ Դէմեանօվիչը։ Զգում են այդ հայ բոլոր Դէմեանօվիչները։ Որ մի ամբողջ ժողովուրդ օղջակիզվեց իրանց «պարզերես» անելու համար։ Եթէ Դէմեանօվիչները զգում են այդ, ապա ինչու՞ չեն խոնարհվում այդ ժողովրդի առաջ, ինչու՞ չեն սպասաւորում նրա անեղը կարիքներին, ինչու՞ չեն իրանց արեան գնով փրկված սեփականութիւնից լիառատ բաժին հանում սպեղանի դնելու նրա արիւնածոր վէրքերին։

«Ուր ժողովուրդը, այնտեղ և հառաչանք»։ Այս է մեր կացութիւնը։ Ժողովրդի հառաչանքը անձեռնմխելի սեփականութիւն է պարզևում Դէմեանօվիչներին, իսկ իր համար դժնդակ ապագայ կերտում։

. . . . . .

Դ. Ա.

ԱԶԱՐԱՑԻՆԵՐԻ ԳՈՐԾԸ

—

Շարունակվում է աշարացիների գործը, որը հետզհետէ դառնում է հետաքրքրական։ Հարկաւոր ենք համարում մէջ բերել 4-դ նեստի նկարագրութիւնը։

Դատավարութեան չորրորդ օրը սկսվում է վկայ Յովհաննէս Նիկողոսեանցի ընդարձակ ցուցմունքով։

Վկան ազատ կերպով ռուսերէն խօսելով ունկնդիրների առաջ պարզում է չետաների Արդանուշ մանելու և դրան հետևող հայերի կատարած մանրամասն պատկերը։

Նախկին վկաների ցուցմունքին, թէ ինչպէս թիւրքերը եկան և ինչպէս դիմաւորեցին նրանց, նա աւելացնում է, թէ տեղական մուսուլմանները երաշխաւորեցին եկողներին հայերի համար, որ սրանք խաղաղ բնակիչներ են, որոնցից չը պէտք է երկիւղ կրել։ Տեղական մուսուլմանների մասնակցութիւնը բռնութիւններին, որ կատարում էին չետաները, վկան եզրակացնում է նրանից, որ չետաներին միշտ աջակցում էր գտնել թաքնված հայերից նրան, որը իրանց հարկաւոր էր այդ բոպէին։

Վկան շատ պարզ կերպով է նկարագրում դեկտեմբերի 24-ի ողբերգական գիշերվայ առանձին էպիզոդները։ Ամեն կողմից լսվող ճիչերից և լացից նախազգալով, թէ ինչ է կատարվում, Նիկողոսեան վերցնում է երեխաներին և շտապում փրկութիւն որոնել։ Այդպէս դեգերելով մերձաւոր փողոցներում և սարսափով անցնելով ընկած դիակների վրայից, նա վերջապէս իրան զցում է մի նկուղ և այդտեղ էլ թաքնվում։

Առաւօտեան, թիւրքերի կարգադրութեամբ, սկսեցին հաւաքել դիակները։ Զեռաները օգտվեցին դրանից և սկսեցին մորթատել սպանվածների ազգականներին։ Վերջինները՝ հրօսակները ժայռերի գլխից նետում էին ձորերը։ Վկան յետոյ հարել է դրանց։ Եղել են 40 հոգի։ Դրանց մէջ, յայտնի չէ ինչու, եղել են և մուսուլմաններ։ Այս առիթով պաշտպանի տուած հարցին՝ վկան պատասխանեց, որ, ըստ լուրերի, այդ մուսուլմանները սպանվել են ռուս զօրքի հետ ընդհարվելու ժամանակ։

Մեղադրեալներից վկայ Նիկողոսեանը ճանաչում է միայն Մահմուդին և Քեամիլ Ղադիր-օղլիին։ Մահմուդին նա հանդիպել է երեք անգամ, ըստ որում յիշում է, որ Մահմուդը առաջին անգամ հաղորդեց իրան այն պարտութեան մասին, որ ռուսները հասցրել էին թիւրքերին։ Քեամիլի մասին նա լսել է իր անեղջից, որ այդ մեղադրեալը գնացել է վերջինիս մօտ, պահանջելով փող վճարել այն մուրհակի համաձայն, որ անները սարքած է լինում որպէս վկայ։ Այդ ժամանակ Քեամիլը իրան պահում է սպառնական, թէև զինված չէ լինում և մօտը ունենում է միայն ձեռնափայտ։

Պաշտպանների առաջարկած մի շարք հարցերին, վկան յայտնում է, որ չետաների շրջանում եղել են տեղացի բնակիչ մուսուլմաններ, որոնց սակայն նա չէ տեսնում մեղադրեալների մէջ, և որ մինչև ռուսների վերադարձը՝ Արդանուշի շրջանի մուսուլման բնակիչների մեծամասնութիւնը փախաւ Թիւրքիա։

Մեղադրեալ Մահմուդի մասին լաւ վկայութիւններ են տալիս հետևեալ երկու վկաները՝ Պողոս Շիմիզիրեան և Յակոբ Մամաջանեան։ Վերջինս հաստատում է այն փաստը, որ մօլլա Սէֆեր-օղլին Ղազարեանի տանը կարդացել է ֆեթվան։ Իսկ այն մասին, թէ հայերի ջարդ է պատրաստվում, վկան իմացել է Թաքիր Իսմայիլ-օղլիից և ուրիշ երկու չետաներից։ Նա ինքը ջարդի ժամանակ փախել է լեռան ետևը, քարանձաւում պահվելու, և անցել է հենց այն ժայռի մօտով, որի կատարից չետաները ցած էին նետում հայերին (ջարդից յետոյ քանվածներին). հենց հետևեալ առաւօտը նա այդտեղ հաշւում է 52 դիակ։ Երկու օրից յետոյ ժայռից ցած էին նետում ոչ թէ մէկ-մէկ, այլ երկու-երեք հոգի իրար կապկած, որքան կարողացել է տանել լուսնի լոյսով։

Վկայ Մարիամ Մալեան մեղադրեալներից ճանաչում է Շաքիր-Իսմայիլ-օղլին և Օրդի-բէկին։ Շաքիրը մտնում է նրա տունը և հրացանի փողը դնելով իր ազգականի կրծքին՝ դրամ է պահանջում նրանից։ Նոյնն է անում և Շերիֆը։ Թէ մէկին և թէ միւսին նա տալիս է 3 ական ռուբլի, վերջին դրամները, որ մնացել էին իր մօտ։ Վկան ճանաչում է և Օրդի-բէկին, որին նա տեսել է չետաների հետ։ Երեքի դէմքն էլ նա լաւ յիշում է, չը նայած որ առաջին երկուսին նա տեսել է մի անգամ, այն էլ երեկոյեան, լամպի լոյսով։

Վկայ Պողոս Սարուխանեան պատմում է, որ Հասան Շեվքիկ-օղլին և Փաշա Խաղնիօղլին իրան ստիպել են փամփուշտներ տանել թիւրքական դիրքերը, և նա ինքը 25 ռ. փրկանք տալով ազատվել է։

Մի ուրիշ վկայ մեղադրեալներից ճանաչում է Թեֆիկ-օղլին (չեռնիկ), Մուստաֆա Մամէդ-օղլին, որ թիւրքերի մօտ պաշտօնակատար է եղել, այնուհետև՝ եղբ. Սալիհ-օղլիներին, որոնցից Օմէրը իր ձին տարել է թիւրքիա։ Յետոյ նա ճանաչում է Զէգայիդ Ահմէդ-օղլին, որին հանդիպել է զինված, և Շաքիրին, որը հաւատացրել է վկայի մօրը իր անզգաստ բարեկամութեան մէջ, բայց և այնպէս նրա ունից հաւաքել-տարել է պղնձէ բոլոր ամանները։

Վկայ Մարիամ Մալեան մեղադրեալներից ճանաչում է Շաքիր-Իսմայիլ-օղլին և Օրդի-բէկին։ Շաքիրը մտնում է նրա տունը և հրացանի փողը դնելով իր ազգականի կրծքին՝ դրամ է պահանջում նրանից։ Նոյնն է անում և Շերիֆը։ Թէ մէկին և թէ միւսին նա տալիս է 3 ական ռուբլի, վերջին դրամները, որ մնացել էին իր մօտ։ Վկան ճանաչում է և Օրդի-բէկին, որին նա տեսել է չետաների հետ։ Երեքի դէմքն էլ նա լաւ յիշում է, չը նայած որ առաջին երկուսին նա տեսել է մի անգամ, այն էլ երեկոյեան, լամպի լոյսով։

Վկայ Պողոս Սարուխանեան պատմում է, որ Հասան Շեվքիկ-օղլին և Փաշա Խաղնիօղլին իրան ստիպել են փամփուշտներ տանել թիւրքական դիրքերը, և նա ինքը 25 ռ. փրկանք տալով ազատվել է։

Մի ուրիշ վկայ մեղադրեալներից ճանաչում է Թեֆիկ-օղլին (չեռնիկ), Մուստաֆա Մամէդ-օղլին, որ թիւրքերի մօտ պաշտօնակատար է եղել, այնուհետև՝ եղբ. Սալիհ-օղլիներին, որոնցից Օմէրը իր ձին տարել է թիւրքիա։ Յետոյ նա ճանաչում է Զէգայիդ Ահմէդ-օղլին, որին հանդիպել է զինված, և Շաքիրին, որը հաւատացրել է վկայի մօրը իր անզգաստ բարեկամութեան մէջ, բայց և այնպէս նրա ունից հաւաքել-տարել է պղնձէ բոլոր ամանները։

Վկայ Մարիամ Մալեան մեղադրեալներից ճանաչում է Շաքիր-Իսմայիլ-օղլին և Օրդի-բէկին։ Շաքիրը մտնում է նրա տունը և հրացանի փողը դնելով իր ազգականի կրծքին՝ դրամ է պահանջում նրանից։ Նոյնն է անում և Շերիֆը։ Թէ մէկին և թէ միւսին նա տալիս է 3 ական ռուբլի, վերջին դրամները, որ մնացել էին իր մօտ։ Վկան ճանաչում է և Օրդի-բէկին, որին նա տեսել է չետաների հետ։ Երեքի դէմքն էլ նա լաւ յիշում է, չը նայած որ առաջին երկուսին նա տեսել է մի անգամ, այն էլ երեկոյեան, լամպի լոյսով։

Վկայ Պողոս Սարուխանեան պատմում է, որ Հասան Շեվքիկ-օղլին և Փաշա Խաղնիօղլին իրան ստիպել են փամփուշտներ տանել թիւրքական դիրքերը, և նա ինքը 25 ռ. փրկանք տալով ազատվել է։

Մի ուրիշ վկայ մեղադրեալներից ճանաչում է Թեֆիկ-օղլին (չեռնիկ), Մուստաֆա Մամէդ-օղլին, որ թիւրքերի մօտ պաշտօնակատար է եղել, այնուհետև՝ եղբ. Սալիհ-օղլիներին, որոնցից Օմէրը իր ձին տարել է թիւրքիա։ Յետոյ նա ճանաչում է Զէգայիդ Ահմէդ-օղլին, որին հանդիպել է զինված, և Շաքիրին, որը հաւատացրել է վկայի մօրը իր անզգաստ բարեկամութեան մէջ, բայց և այնպէս նրա ունից հաւաքել-տարել է պղնձէ բոլոր ամանները։

Վկայ Ննա Նիկողոսեան ճանաչում է Մահմուդին միայն լաւ կողմից։

Վկայ Մանուշան Սաքոյեան պատմում է, որ իր որդին, չետաների մօտից փախչելով, իրան ասել է Բեկիրի մասին, որը մեղաւոր է իր կալանաւորման մէջ. յետոյ նրա որդին սպանվում է, որի շորերը գտնվում են Թեֆիկ-Ալի օղլի տան ամբարում։ Մեղադրողների հարցին, թէ ճանաչում է նա արդեօք Մահմուդ Ալի-օղլին, վկան մտածում է մեղադրեալին և նրա ուսը շարժելով՝ ասում է ժպիտով. «Ահա նա, հայի փեսան»։ Այնուհետև վկան բացատրում է, թէ Մահմուդը իր որդու համար կնութեան էր ուզում վկայի աղջկան. նրան մերժում են, որից յետոյ նա վերցնում տանում է հարևան հայի աղջիկը, հագցնում թիւրքական շորեր և ստիպում կատարելու թիւրքական ծէսեր։

Դատավարութիւնը շարունակվում է։

ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ ՄԸ

—

Վասպուրականի գաղթական հայութիւնը նորէն կը դիմէ իր արիւնաներկ ընդաւաղը։ Հազիւ թշնամիի ոտքը մի քանի քայլ հեռացած Վանէն, ջախջախուած վասպուրականցին նորէն կապեց իր խեղճուկ շալակը և ոխուր, արիւնոտած սրտով, բայց հաստատ մտադրութեամբ ճամբայ ելաւ դէպի իր հայրենական տնակը։ Ապրիլ իր պապերու ապրած տեղը, փակչիլ իր դաբաւոր հողին կամ մեռնիլ-բնաջնջուիլ—այդ է Վանի հայութեան անխախտ որոշումը։

Վանեցիներու վերադարձին մեծագոյն արգելքներէն մէկն ալ այրուած տուներն են։ Կարծես բաւական չէին արտաքին հարուածները, յիմարներ ոչ չարամիտներ կրակի տուին Վանի հայերու լաւագոյն շէնքերը, և այսօր շաւանեցիներ, որոնք ամբողջ սրտով կը փափաքին երկիր վերադառնալ ու հաստատուիլ իրենց քաղաքին մէջ, չեն կարող այդ քայլառնել, մտածելով որ հոն չպիտի գտնեն նոյն իսկ իրենց ամայի տունը, ուր կարողանային պատըսպարուիլ վերահաս ձմրան խստութիւններէն, և նախագաս կը համարին մնալ Կովկաս ու անէ կերպով քարշ տալ հոս իրենց գոյութիւնը։

Վատահ կարելի ըսել, թէ Վանի վերաբնակելիութեան մեծագոյն արգելքներէն մէկն է այս պահուս այրուած տուներու խնդիրը։ Եւ մտածել թէ այդ կործանարար քայլն առած են ոչ թէ թիւրքերը, ոչ թէ Զէվդէթը, ինչպէս անցեալներ գրած էր տեղական թերթ մը, չենք գիտեր ինչ նկատումներով, այլ կարգ մը գառնուկի հաւատով գայլեր։

Պարզ խօսինք. վանեցի և կամաւորական խումբերէ զանազան ակնատեսներ գրաւորապէս ու բերանացի կը վկայեն, թէ Վանի առաջին գաղթի վերջի օրերուն՝ երեկուշաբթի օրուընէ մինչև հինգշաբթի՝ թիւրք բանակին կամ Զէվդէթի Վան մտնելէն առաջ արդէն իսկ բոցերու մէջ էին Վանի լաւագոյն տուներէն շատեր։ Ասոնք իրենց ստորագրութեան տակ կը տեղեկագրեն մեզ, թէ տուները կայրուէին բուն իսկ հայ կամաւորներու ձեռքով։ Ականատես վանեցիներ կը վկայեն, թէ տուները կայրուէին ցուցակի մը համաձայն։

Վանի նախորդ նահանգապետ պ. Արամ Վանի մէջ կը գտնուէր այս հրկիզումներու ատեն, ինչպէս նաև կամաւորներու շատը։

Անտարակոյս պ. Արամ ևս չէր կրնար անտարբեր աչքով դիտել քաղաքի այս հրկիզումը և քննեց ու տուգեց, թէ ովքե՞ր էին թշուառացած ժողովուրդի մը այս վերջին ապաստարաններն այրող-փճացնողները։ Ստոյգ է թէ ցուցակի մը համաձայն հրկիզուած են տուները։ Ովքե՞ր էին այդ ցուցակը կազմողները, և ովքե՞ր՝ հրկիզման դժոխային գործը կատարողները։ Ի՞նչ նպատակներով ցուցակագրուեցան հրկիզելի տուները։

. . . . . .

Ի՛բրահիմ

ՀՐԱՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ-ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻՆ

—

Հայաստանի բեկորների մեր ապաստարանը թեկոխեց արդէն իր գոյութեան երրորդ ամիսը, և այս ամբողջ ժամանակամիջոցում հիւանդութեան (էպիդիմա), մահվան ոչ մի դէպք չեղաւ։ Մենք միշտ կըրկնում ենք և շեշտում այս փաստը, որ ամենափոփչն ու միակ մխիթարութիւնն է մեր։

Ցրտերը սկսում են, ապաստանածների մեծագոյն մասը ստարբրիկ, առանց անկողնի ու հաստատ բնակարանի են։

Ապաստարանում կառուցվող աղիւսաշէն ձմերային որոցը թէյարանի և ճաշարանի համար վառարաններով և խոհանոցով՝ օրերս պատրաստ կը լինի։ Ցանկանում ենք յարմարեցնել և հանրակացարանի, որ գոնէ մի քանի հարիւր հոգի գիշերին էլ, սակայն... սակայն ոչ պետութիւնը, ոչ Քաղաքների Միութիւնը մատ-մատ չեն խփում, իսկ մենք էլ վճռել ենք մինչև վերջը մնալ անխախտ մեր որոշումի մէջ, այն է՝ ոչ օրի դիմում չանել և ազգային աղէտը թողնել ազգային անհատական սփոփանքին։

Ստացված են նուէրներ՝

Պարիզից՝ անդրիագործ Ա. Տէր-Մարուքեանից «Ռուսական Արծիւը Մասեաց Աղաւնուն հովանի» իր ստեղծագործութիւնից արտանկարված 200 պօստկարտէր։

Քրիստափոր Մելիք-Մարութեանից 10 ռ., Գրիգոր Պալեանից 1 ռ., Ռոստոմ Բաղդասարեանից 5 ռուբլի։

«Մշակի» միջոցով՝

Թիրմեզից՝ Արսէն Սափարեանի միջոցով հանգանակած 16 ռ., Ալուակայից՝ Ա. Յովհաննէսեանից 15 ռ., Մելիքանից 1 ռ., Մարդեանից 50 կ., Մոսկվայից՝ Յարութիւն Հախնազարեանից իր ներքագ Պողոս Աղամիրզեանի դագաղին պակի փոխարէն 40 ռ.։

Տ. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Կովկասեան մի շարք քաղաքներից, ինչպէս օրինակ Գանձակից, Երևանից, Ալէքսանդրօպոլից, քաղաքային վարչութիւնը ստացել և ստանում է գրութիւններ, որոնց մէջ խնդրում են աջակցութիւն ցոյց տալ ալիւր և փայտ ստանալու։ Այդ նպատակով Թիֆլիս է եկել Գորիի քաղաքագլուխը։ Նրա ասելով ալիւրի գները այդ շրջանում բարձրացել են անհաւանական չափերու։ Զանգեզուրի գաւառում ալիւրի պուդը ծախվում է 4 ռ., Բագուի գաւառում 3 ռուբլիով։ Դրա հետևանքով էլ սված գիւղերի ազգաբնակութիւնը մաս-մաս դիմում է դէպի քաղաքները հաց վաստակելու յոյսով. սակայն դրանք իրանց հերթին սպառնում են քաղաքներում սուր ճգնաժամ ստեղծել։

◆ Ահա քանի օր է Թիֆլիսում նորից սկսվեց ածուխի տագնապ։ Ազգաբնակութեան աղքատ դասերը փողոցից փողոց են վազվզում 5—10 կոպէկի ածուխ գտնելու համար, որպէսզի օրվայ պէտքերին բաւարարութիւն տան։ Ածուխ կամ բոլորովին չէ ճարվում, կամ եղածը սատիկ թանգ գներով են վաճառում։ Զարմանալի կերպով գիւղերից ածուխ բերելը՝ ուտանկերով, մանաւանդ սայլերով, վերջին ժամանակ միանգամից դադարել է։ Ի՞նչ է պատճառը։ Պատճառը դարձեալ քաղաքային անտեսական կառավարիչների ու հսկիչների անփոյթ վերաբերմունքն է դէպի քաղաքի ազգաբնակութեան շահերը, որից և օգտվում են առհասարակ շահագործող անձինք, իսկ ներկայ դէպքում «չարչիները»։ Կը տեսնէք, որ քաղաքում պատվում են այդ չարչիների փոքրիկ սայլերը ձիերով և հազիւ 10—20 կոպէկի ածուխ պարունակող տոպրակը վաճառվում է 75 կոպէկով։ Նաւթը նոյնպէս վերջերս դժուարութեամբ է ճարվում։

◆ Նահանգապետի կարգադրութեամբ քաղաքային վարչութեան անդամ Զաքարէկ մեկնեց Բոռոմով, իմանալու և ծանօթանալու, թէ որտեղ կան ապրանքներ և ի՞նչ գներով են ծախվում նրանք։ Բացի այդ նա պէտք է ծանօթանայ և Վլադիկավկազի երկաթուղիների երթևեկութեան կանոնների հետ։ Ի վերջոյ նրան ուղարկում են նրա համար, որ ամեն կերպ աշխատի, որպէսզի քաղաքը կանոնաւորապէս ստանայ կենսական անհրաժեշտ մթերքներ։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի դիրեկտորը, ի նկատի ունենալով մեր դրամի պակասութիւնը, հրաման է արձակել, որի մէջ

հրահանգում է կենդուկտորներին ճամբորդներից ընդունել յօբելեանական մարկաներ, որոնց միւս երեսին գրված է. «Имѣетъ хожденіе наравнѣ съ серебряной монетой». Կարգադրված է չընդունել պոստային և այլ տեսակի մարկաներ։

◆ Առաջիկայ չորեքշաբթի, հոկտ. 14-ին, կը կայանայ պահեստիների ընտանիքների թաղական հոգաբարձուների ժողովը, ուր քննվելու են այդ ընտանիքներին նպաստ տալու և դրա հետ կապված ուրիշ հարցեր։

◆ Նահանգապետը թոյլատրել է Թիֆլիսի լատիշների ընկերութեան կազմել բարեգործական երեկոյթ յօգուտ փախստական լատիշների։

◆ Հոկտ. 8-ին Թիֆլիսում ստացվեցին հետևեալ մթերքները. ալիւր՝ 4 վագոն, սագ 3 վագոն, մրրզ՝ 3 վ., գարի՝ 4 վ., նաւթ՝ 3 վ., ղենի՝ 1 վագոն և գեռանանձոր 8 վագոն։

◆ Հոկտ. 9-ի առաւօտեան № 40 լազարէթում կային խօլերայով հիւանդ 93 հոգի՝ խօլերայով կասկածելի՝ 6. սրանցից հոկտ. 10-ին հիւանդանոցից դուրս եկան 7 հոգի։ Բացի այդ՝ հիւանդանոցում կան բնաւոր տիֆով հիւանդներ 56 հոգի. սրանցից 34-ը զինուորականներ են։

◆ Նոյն հիւանդանոցում կան սկարլատինով հիւանդներ 77, դիֆտերիտով՝ 13, ծաղկով 2, փոքրարինքով՝ 40 և կրկնվող տիֆով՝ 3։

◆ Քաղ. դումայի երկուշաբթի օրը կայանալիք նիստում, ուրիշ այլ հարցերի թւում, կայանալու է քաղ. լոմբարդի կառավարիչ Դ. Կաֆեանի տեղ նոր կառավարչի ընտրութիւնը, որովհետև վերջինիս լիազօրութիւնը լրացել է արդէն։

◆ Այս օրերս Թիֆլիս է գալու յայտնի դասախօս Վ. Վ. Վոռովսքի, որը հրաւիրված է Հասարակական ակումբի կողմից դասախօսութիւններ կարդալու։ Նրա առաջին դասախօսութիւնը լինելու է սերբ-բոլգարական յարաբերութիւնների մասին, որ կարդացվելու է հոկտ. 18-ին, կիրակի օրը, Երաժշտական դպրոցի դահլիճում (Գրիբոյեդովսկայա № 10), իսկ երկրորդը լինելու է «Թիւրքիայի քաղաքական պատմութեան» մասին, հոկտ. 19-ին, Թիֆլիսի ժողովարանում։ Վոռովսքին այստեղից գնալու է Քութայիս և Բաքու։

◆ Կովկասի Հայոց Հրատարակչ. Ընկերութեան վարչութիւնը իր վերջին նիստում որոշել է իր հրատարակութիւններից (մանկական-պատանեկական սերիայից) 50-ական օրինակ ուղարկել հայ օրգանոցներին։

◆ Պետրոգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի լազարէթի վարչութիւնը դիմել է Հայոց Հրատարակչ. Ընկերութեան խորհրդին խնդրելով իրանց լազարէթում ապաքինող հայ զինուորների համար հայերէն գրքեր ուղարկել։ Վարչութիւնը ընդառաջ գալով այդ խնդրին, որոշել է թեթև ընթերցանութեան գրքեր ուղարկել 5-ական օրինակ։

◆ Ինչպէս յայտարարվում է, «Ե. Հ.» թերթը, գրաշարների գործադուլի պատճառով, լոյս չի տեսնի մի քանի օրով, մինչև գործի կանոնաւորութիւնը։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Բաքուից գրում են, որ հոկտ. 8-ին քաղաքագլուխ Լ. Լ. Բիչը և իրաւաբան Ֆ. Ֆ. Սէրեպլինսկի մեկնել են Մոսկվա 8 միլիոն փոխառութիւն կնքելու Շոլլարի ջրանցքի շինութեան համար։ Բիչը Մոսկվայից գնալու է Պետրոգրադ քաղաքի միջնորդութիւնները պաշտպանելու։

◆ Բաքուի քաղ. դումայում կայացել է անատէրերի և վաճառականների բազմանդամ ժողովը, որը հրաւիրել էր քաղաքապետը գների բարձրացման առիթով։ Քաղաքապետի առաջարկութեամբ ընտրվեց առանձին յանձնաժողով անատէրերից և կենսարներից, որը պէտք է քննի այն բոլոր արձանագրութիւնները, որ կը կազմի օստիկանութիւնը մթերքների գները բարձրացնող վաճառականների վրա։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպերա

Առաջին անգամ լսելով յայտնի տենոր Կ. Լերէդէվին «Ժիդովկա» օպերայի մէջ, հոկտ. 9-ին, Եղիսաբէթի դերում, մենք համոզվեցինք, որ անուանի արտիստն իրաւամբ վայելում է երաժշտասէր հասարակութեան առանձին համակրութիւնը։ Նրա ձայնական և բեմական տաղանդաւոր արտայայտութիւնը երևան եկաւ յիշեալ դերի անզուգական կատարումով։

Բախիլի դերակատար ա. Բրան օժտված է ուժեղ ձայնով. բայց այդ պատասխանատու դերում նա ամբողջական տպաւորութիւն չը կարողացաւ գործել։ Բախիլի դերը թէ դրամատիկական է և թէ հոգեբանական։ Նրա հոգեկան տանջանքները պահանջում են համապատասխան նրբութիւն այդ դերի կատարող-երգչուհուց։ Տիկնոջ խաղի մէջ նկատվում էր աւելի արտաքին փայլ, քան ներքին շաղախ, ըստ որում պատշաճ տեղերում նրա պիանիսիմոները թերանում էին ըստ ամենայնի։ Բախիլի անհամեմատ աջող կատարողների Թիֆլիսը շատ է տեսել անցեալներում։

Այդ երեկոյ գեղեցիկ տպաւորութիւն գործեց Զիգիանին իր սահուն խաղով՝ ու աջող երգով՝ Լէօպոլդի դերում։ Պարոնի ձայնը յատակ էր։

Շվէցը ուրիշ անգամներ աւելի օգնորված է խաղացել կարդինալի դերը, քան այդ երեկոյ էր։

Նոր դերասանների թւին պատկանող Զուբարէվ Ռուլիէրոյի դերը տարաւ շատ բարւաբար։

Դէսսը օրկէստրը վարում էր տեղ-տեղ ուժեղ տեմպով, որից երգչուհիների ձայնը խլանում էր։ Սակայն ընդհանուր առմամբ օրկէստրը նուագում է հարթ։

Մոռացանք յիշել ա. Դուլիոյին, որ պրինցուհու փոքրիկ դերում խաղաց կատարեալ աջողութեամբ։

Աջող էր սովորականի նման բալետը Վակարէցի ղեկավարութեամբ և ա. Բաուէրզակի մասնակցութեամբ։

Թատրոնը լի էր։ Բոլոր դերակատարները, մանաւանդ Լեբէդէվը արժանացաւ անվերջ ծափերի։

Վաղը առաջին անգամ այս սեզոնում կը տրվի յայտնի «Ֆաուստ» օպերան։

Ռէցէնզէնտ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

ԶԱՆԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒԸ

Ընկերութեան նախաձեռնութեամբ բացված «Մի բաժակ թէյից» 1915 թ. յունիսի 14-ից մինչև յուլիսի 18-ը եղել է՝ մուտք—1021 ր. 81 կ., ելք—434 ր. 73 կ.։ Զուտ արդիւնք մնացել է 587 ր. 08 կ.։

Երեկոյթից ստացվել է՝ մուտք—378 ր. 67 կ., ելք ունեցել է—39 ր. 83 կ.։ Զուտ արդիւնք մնացել է 338 ր. 84 կ.։

Ընդհանուր գումար՝ 925 ր. 92 կ.։

Խնդրում ենք անդամներից յայտնել, թէ ինչ ընկերութեան յանձնել այդ գումարը։ Նամակները ուղղել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Вознесенская ул. №. 4, М. Тигранянъ.

Մ. Տիգրանեան, Ս. Խրիմեան

727. 1—1

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Գլօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում ըստ շաբաթական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱԶԱՄԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղեղային երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։

Մ. Մ. ԲԵՆԻՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՈՒԶԵԱՆ—12—1 ժ. երեք. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ-Բ.-ԺԻԶԷ ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—169

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող., № 18 (Գլօրոնցօվի արձանի մօտ)։ Բժշկի ընակարան. Սեմեոնովսկայա, № 16.

(չ. ա. կ.) 1018. 100—92

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող

Հայրապետական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑԻ

Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փող., № 36,

Նոյն տեղը ՊԱՆՍԻՈՆ Մ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑԻ

Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիոնով, դասերի պատրաստութեամբ և առանց

Ինդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։

(ե. հ. շ. կ.) 541. 50—33

ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ

ՏՐԻՊԵՐԻ (սուսուռնակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Սուսունակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ՝ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից։ Այժմ այդ հիւանդութիւնը ըստ ժշկվում է երեք շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1395 վկայագրով։

Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանց։

Այն կասկածանքը բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են ի վաճառ հանվել, որոնք շռայլորէն բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն դժուարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ։

Գուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և՝ գուցէ՝ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են։ Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենանշանակ տեսակը։

Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնելու, որ «Ռապիդ» գործ ածելու ժամանակ չը բուժելու դէպք չէ եղած և իւրաքանչիւր հիւանդ, որ գործ է ածել երկու կրկնակի սրսուկ «Ռապիդ», անպայման առողջացել է, որքան որ հիւանդութիւնը տեսած լինէր։

Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաստատությունը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, ի հաստատութիւն որի Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 3 սրսուկ ստացողի (բուժման ամբողջ կուրսը) ես ձրի ուղարկում եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱԻՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ գրվողը չը բժշկվի։ Այս թղթի պատճէնը այս է.

«Ես, ի ներքոյ ստորագրողս, տալիս եմ այս թուղթը պարոն այս-ինչին այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 3 կրկնակի սրսուկ հնօրէյի դէմ, երաշխաւորում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ։ Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաբորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնելու։

Աւելի լաւ համոզելու համար ես վճռեցի ամեն մի յայտարարութեան մէջ տեղադրել նոյնքան շնորհակալական նամակներ։ այս նամակների բոլորի խմբագիրները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել։ Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որեւէ բարեգործական նպատակով։

Մեծ. պ. Դէլամուրէ! Սրտանց յայտնում եմ Ձեզ իմ անկեղծ և սրտագին շնորհակալութիւնը Ձեր հրաշագործ «Ռապիդ» համար, որ ինձ ազատեց խրոնիքական հնօրէյից, որ 8 տարի շարունակ ունէի ես։ Ես ամեն դեղեր գործածելով՝ ոչ մի հետևանքի չը հասայ։ Ես վճռեցի այդ ամենից յետոյ բերել տալ մի սրսուկ «Ռապիդ», որը գործածելուց՝ ինձ միանգամայն առողջացած զգացի։ Նորից խնդրում եմ ընդունել իմ խորին շնորհակալութիւնը։ Ես այժմ կարող եմ ամեն մի հիւանդի ասել, որ «Ռապիդ» տալը դյուրութիւն աւելանալու դէպքում՝ այլ ևս դյուրութիւն չունի խրոնիքական արբպղէրը։ Ներկայ նամակը կարող եք տպագրութեան տալ։ Ս. Պ. Կ—վ կայարան, 26 փետրվ. 1914 թ.։

Երկու կրկնակի սրսուկի և մի աբկղեկ պիլիւլների (լրիւ բժշկվելու կուրսը) գինն է 9 բուբլի։ Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 բուբլի։ Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար տանելուց յետոյ։

Պատուէրները հասցէագրել միմիայն.

Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламуръ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская, 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы д. Кредитнаго О-ва.

Հեռագրական հասցէն՝

Тифлисъ—Американецъ.

(կ.) 609. 50—6

ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

„АРМАТИНЪ“ А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ“ совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина“ не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ. „Арматинъ“ А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ“ только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рецепт. пр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(Հ. Կ.) 174. 0—67

Լոյս տեսաւ

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

„Աղէտի եւ տառապանքի աշխարհից“

(Այց Թիւրքահայ փախստականներին)

78 եր. գինը 40 կ.

Արդիւնքը յատկացվում է Տ. Նազարեանի ճաշարանի օգտին։

Գրքերի պահեստը Տ. Նազարեանի մօտ. դիմել նաև՝ «Գուտտենբերգ», կենտրոնական և «Գիր» գրախանութներին։ Իսկ Բաքւում „Сотрудникъ“ (Сегаль) և „Посредникъ“ գրավաճառներին։ (օ. մ.) 693. 10—6

Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ

ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 34, տել. № 9—76.)

Ինդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրներն ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։

(ե. հ. կ.) 480. 0—35

Լոյս տեսաւ

Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ **ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ** Ա. մասը։

Շուտով լոյս կը տեսնի Գ. գիրքը։ Դիմել «Գիր» գրավաճառատոցին՝ Тифлисъ, Вельяминовская 7.

(կ.) 715. 2—2

!Զգուշացէք կեղծիքներից!

ՊՐՕՎԻԶՈՐ

Գ. Փ. Юргенсъ-ի Բորաս-Տիմօղեան Սապօն

Գրտինքի, այրուածքի, պէպէնների, սուգրիների, պզուկների և դեղին խալերի դէմ։

ՏՈՒԱԼԷՏԱՑԻՆ-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ։

Վաճառվում է ամենուրեք.

կտորը 50 կոպէկ, կէս կտորը 30 կոպէկ։

(կ.) Г. 26—13

Գոսպիտալ փող., № 1893 թ. Գ. Փ. Юргенсъ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բաքու, Կրասնովոդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խսկապէս Դիզել շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷԾ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ձիաին ½ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառույց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամո» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, արաքատորներ և այլն՝ յայտնի ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիկական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարանները սարքել և գործի գցել իր մէջ ունեցողներով՝ ինժենէրներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ.կ.) 551. 150—138

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.